

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ ՍՅՈՒՆՅԱՑ ԹԵՄԻՑ

ՀԻՄՆԱՐԿԵՔ ՍՈՒՐԲ ՏՐԴԱՏ ԵԿԵՂԵՑՎՈ

Սյունյաց թեմի պատմության մեջ արձանագրվեց մի նոր թվական եկեղեցաշինության առումով, այս անգամ Վայքի շրջանում։

Սյունյաց թեմի առաջնորդ Տ. Սամվել եպիսկոպոս Արիստակեսյանը Մայր Աթոռի միաբանների և քահանա հայրերի ընկերակցությամբ կատարեց հիմնարկեքը Ս. Տրդատ եկեղեցվո։

Առաջնորդ Սրբազանը մյուռոնով օծեց եկեղեցու 16 հիմնաքարերը, որոնք գետեղվեցին ճշտված հիմքերի տակ։ Եկեղեցական արարողությանը ներկա էին հազարավոր հավատացյալներ՝ Սյունյաց աշխարհի տարբեր շրջաններից։

ՀԱՏՎԱԾ ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱԶԱՆԻ ԽՈՍՔԻՑ

Սիրելի հավատավոր զավակներ պատմական Սյունյաց աշխարհի։ Մեր կարծիքով եկեղեցաշինությունը եղել և մնում է հայ ժողովրդի բարոյական ճկարագրի շինարար կողմը։ Դարերի հոլովույթով, հայոց մեջ, եկեղեցի կառուցելը սոսկ ճարտարապետական մի շինություն արձանացնել չէ, այլ այն եղել և մնում է որպես աստվածապաշտության համար նախատեսված հավաքատեղի, որտեղ ի մի են գալիս Քրիստոսին խոստովանող հոգիներն ու սրտերը։

Եկեղեցին հայ ժողովրդի զավակներին իր մշտագո ներկայությամբ դաստիարակել և արժանի է դարձել Աստուծո որդեգրությանը։

Պատմության մեջ եկեղեցին ներկայանում է որպես քրիստոնեության թանձրացյալ մարմնացումը իր մշտագո աստվածապաշտությամբ։

Եկեղեցին կրոնա-բարոյական դաստիարակության սրբազան ավանդարան է, որը ինքնարուխ և վճիռ աղբյուրի նման բազմաթիվ սերունդներ է սնել։

Ի վերջո եկեղեցին առանձնակի է փրկչական դեր, նա է մաքրագործում հոգիները և պատրաստում ժառանգորդներ հավերժական կյանքի համար։

Այսօր Ս. Տրդատ եկեղեցու հիմնարկեքը, պատմական Մոզ քաղաքի տեղում, յուրաքանչյուր վայրեցու սրտում արթնացնում է մեր հայրերի դավանած և մեզ ավանդած անաղարտ հավատքի շնորհները։

Սիրելի վայրեցիներ, եկեք բոլորս միասին լծվենք այս Աստվածահաճո գործին՝ շուտով ավարտելու եկեղեցու շինությունը և գոհությամբ օրհնաբանելու։

Երանի՞ եկեղեցի շինողաց, ամեն։